որոց համար գրեր էր առ նա Կաթուղիկոսն Հայոց։

Սկիզբ ալ դարձեալ 75 տարուան միջոց մը անցնելով կը սկսի Քրիստոսի 625 թուականէն պատմել Պարսից Բ. Խոսրովու և Հերակլեայ պատերազմները, Ցունաց տկարանալը և օգնութիւն խնդրելը ի Խազրաց, որք կ'արշաւեն ի Վիրս և յԱղուանս, երկու կողմէն նեղեալ Խոսրով՝ իր բնիկ ազգէն, ընտանիքէն և յորդւոցն ալ կը մերժուի և կը սպաննուի . . . ։

Խոսրովայ սպանութեամբ իր բռնութենէն գերեալ և կապեալքն կարձակին. ասոնցմէ է Աղուանից կաթուղիկոսն ալ Վիրոյ, որ երկար տարիներու տառապանքէ ետեւ՝ կը դառնայ իր եկեղեցին բարեկարգելու. բայց Խազիրք իր հայրենիքը պաշարած են, կը ստիպուի իբրեւ գերի երթալու անոնց առաւոտ Խանին որդւոյն բանակը և պատիւ գտնելով կը դառնայ տեղը։ Այս ուղեղնացութեան ընկեր էր մեր պատմիչն այլ, որ շատ հետաքննական և պիտանի տեղեկութիւններ կուտայ այն ատենուան ամենէն գօրաւոր ազգին՝ Խազրաց վրայօք"։

Աղուանից ազգին վերաբերեալ քանի գրուածքներ երեւում են զանազան ժամանակներում, բացի Մովսէս Կաղանկատուացւոյ Աղուանից պատմութենէն. զորս դար առ դար յիշատակէ Հ. Գարեգին Զարբանալեան «Հայկական Հին Դպրութեան պատմութիւն" անունով գրքի մէջ, զոր օր. 1 Ե. դար. Գիւտ կաթուղիկոսի թուղթ առ Վաչէ արքայն Աղուանից, որ է խրատ Քրիստոնէական կրօնքը սրբութեամբ պահպանելոյ համար (305 և 427) 2) Զ. դար, Աբրահամ եպիսկոպոսի Մամիկոնեան խրատական գրուածք առ Վաչական թագաւորն Աղուանից (388)։ 3) Զ դար. Պետրոս եպիսկոպոսի Սիւնեաց առ Վաչագան արքայն Աղուանից վասն մարդեղութեան Քրիստոսի։ Եւ պատասխանիք հարցմանց նորա (390). Զ- դար. Մատթէի երիցու թուղթ առ Վաչագան արքայ Աղուանից։ Է. դար. Յովհաննու Բ. կաթուղիկոսի Հայոց առ Աբաս կաթուղիկոս Աղուանից 432) 4) Ը. դար. Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսի բան համառօտ առ վարդապետս Աղուանից։ (475)։ 5) ԺԲ. դար Մխիթար Գոշ վարդապետի Ճարք Հայրապետացն Աղուանից (672) 6) Միսայէլ եպիսկոպոսի Աղուանից իմաստասէր կոչեցելոյ. մեծի կողմանցն